ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ [illegible]

«01» 09 2022թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ք.Երևան,Ավան

Թիվ 104 հիմնական դպրոց , 1ա դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Սարգսյան Ռուզաննա Ռազմիկի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2022- 2023» ուսումնական տարի

## ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

1ա դասարանում սովորում են 36 աշակերտ՝ 16 տղա, 20 աղջիկ: Այն բազմանդամ մի կոլեկտիվ է, որում կան բնավորության և ընդունակությունների տարբեր դրսևորումներով օժտված երեխաներ: Ընդհանուր առմամբ կոլեկտիվը հաշտ է, սակայն պահանջվում է մեծ աշխատանք՝ դաստիարակության, կարգապահության, ուսման որակը բարձրացնելու ուղղությամբ:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1. Դասարանում ամրապնդել կարգապահությունը:
2. Ուսման նկատմամբ ձևավորել բարեխիղճ վերաբերմունք:
3. Դպրոցի, դասարանի մաքրության, ուսումնական նյութերի, գույքի նկատմամբ հոգատար վերաբերմունքի դաստիարակում:
4. Կուլտուրական, բարեկիրթ վարվեցողության հմտությունների ձևավորում:
5. Հայրենասիրության դաստիարակում:
6. Ազնվության, ճշմարտախոսության դաստիարակում:
7. Աշակերտների ինքնուրույնության և ստեղծագործական կարողությունների զարգացում:
8. Հաղթահարել բնավորության բացասական գծերը:

### 3. Հայեցի դաստիարակություն:

***3.1. Հոգևոր դաստիարակություն*:** Աշակերտներին տալ հոգևոր դաստիարակություն: Պահել և պահպանել մայրենի լեզուն, ազգային սովորույթներն ու հոգևոր արժեքները, կրոնն ու եկեղեցին, որը հայապահպանության հիմքն է: Զանազան զրույցների միջոցով դաստիարակել սերունդների մեջ նվիրվածություն հայրենիքի նկատմամբ:

3.2. ***Գեղագիտական դաստիարակություն:*** Անձի լիարժեք ձևավորման համար շատ կարևոր նշանակություն ունի գեղագիտական դաստիարակությունը :Երեխաների մեջ վեր հանել գեղեցիկն ընկալելն ու գնահատելը: Կազմակերպել այցելություն մշակութային օջախներ:

***3.3. Ֆիզիկական դաստիարակություն:*** Ձևավորել անվերապահ խնամք և հոգատար վերաբերմունք սեփական անձի, մարմնի ու կեցվածքի նկատմամբ: Զարգացնել կամային հատկանիշներ, կամք, նպատակասլացություն, հետևել անձնական հիգենիային:

**3.4. Աշխատանքային դաստիարակություն:** Աշակերտների մեջ սեր և եռանդ սերմանել աշխատանքի նկատմամբ: Մասնակցել դպրոցական շաբաթօրյակներին: Արժեքավորել աշխատանքով ստեղծածը: Սովորեցնել գնահատել սեփական ու այլոց աշխատանքը:

***3.6. Բնապահպանական դաստիարակություն:*** Երեխաներին բացատրել մեզ շրջապատող բնության դերն ու նշանակությունն անձի կյանքում, որը կմղի նրանց բնության պահպանմանը և ճիշտ օգտագործմանը: Խնամել շրջակայքի ծառերը և մասնակցել ծառատունկին:

4*. Դպրոց-ընտանիք կապը* օգնում է երեխայի լիաիժեք զարգացմանը, որի համար էլ ստեղծում ենք ծնողական կոմիտե: Հրավիրել ծնողական ժողովներ և ծնողներին մասնակից դարձնել կազմակերպվող միջոցառումներին, էքսկուրսիաներին և այցելություններին:

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ու/շ | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| I | Եկեք ծանոթանանք | 07.09.22թ | Դասղեկ |
| II | Իմ ընտանիքը | 14.09.22թ | Դասղեկ |
| III | Անկախության օր | 28.09.22թ | Դասղեկ |
| IV | Ուսուցչի օր. բացիկների պատրաստում | 05.10.22թ | Դասղեկ |
| V | Մարդիկ մեր շուրջը | 12.10.22թ | Դասղեկ |
| VI | Առողջ ապրելակերպ. հանդիպում բժշկի հետ | 02.11.22թ | Դասղեկ |
| VII | *Հանդուժողականության ուսուցում*<br>Համագործակցություն | 09.11.22թ | Դասղեկ |
| VIII | Արդյունավետ հաղորդակցում | 16.11.22թ | Դասղեկ |
| IX | Կոնֆլիկտների հաղթահարում | 23.11.22թ | Դասղեկ |
| X | Բանակցություններ | 30.11.22թ | Դասղեկ |
| XI | Երեխայի իրավունքներ | 07.12.22թ | Դասղեկ |
| XII | Հանդուրժողականություն | 14.12.22թ | Դասղեկ |
| XIII | Ամանորյա հրաշք | 21.12.22թ | Դասղեկ |
| XIV | Հայոց բանակի օր | 25.01.23թ | Դասղեկ |
| XV | Սուրբ Սարգիս զորավարի հիշատակության օր | 01.02.23թ | Դասղեկ |
| XVI | Բարեկիրթ վարվելաձևի կանոններ | 08.02.23թ | Դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | |
| **XVII** | Պատրաստվում ենք «Թումանյանական շաբաթին» | 15.02.23թ | Դասղեկ |
| **XVIII** | Դասասենյակի նախապատրաստում գարնանը | 22.02.23թ | Դասղեկ |
| **XIX** | Բարև՛, գարո՛ւն | 01.03.23թ | Դասղեկ |
| **XX** | Շնորհավոր տոնդ, մայրիկ | 15.03.23թ | Դասղեկ |
| **XXI** | Ինչպես պահպանել ընկերությունը | 05.04.23թ | Դասղեկ |
| **XXII** | Վարքի կանոնների քննարկում | 12.04.23թ | Դասղեկ |
| **XXIII** | Հայոց Մեծ Եղեռն | 19.04.23թ | Դասղեկ |
| **XXIV** | Իմ հայրենիքը Հայաստանն է | 26.04.23թ | Դասղեկ |
| **XXV** | Հաղթանակի տոն | 03.05.23թ | Դասղեկ |
| **XXVI** | Խաղաղություն | 10.05.23թ | Դասղեկ |
| **XXVII** | Ձեռք բերած գիտելիքների ամրապնդում | 17.05.23թ | Դասղեկ |
| **XXVIII** | Առջևում ամառ է | 24.05.23թ | Դասղեկ |

# ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

| 1-ին կիսամյակ | | 2-րդ կիսամյակ | |
|---|---|---|---|
| Շաբաթվա օրը | Դասաժամը | Շաբաթվա օրը | Դասաժամը |
| Չորեքշաբթի | 5-րդ | | |